

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ. հունիսի 17-ի նիստի

Խորհրդի 41 անդամներից ներկա էին 29-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրություն:
2. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, դոկտոր Ա.Մարգարյան):
3. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների մասին:
4. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, դոց. Վ.Այվազյան):
5. ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին (զեկ.՝ Կլինիկայի տնօրեն, դոց. Ք.Վարդանյան):
6. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական հարցերով խորհրդատուների (պրոֆ. Հ.Խաչիկյան, պրոֆ. Ա.Վաղարշյան, ասիստենտ Կ.Ամիրյան) հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի ընտրության մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը հայտնեց, որ Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցութին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր Արա Հարությունի Գաբուզյանը:

Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ Քրեական իրավունքի ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնի համար Ա.Գաբուզյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ զաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով խորհրդի նախագահ Գ.Ղազինյանի առաջարկով ֆակուլտետի

գիտական խորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա.Վաղարշյան (նախագահ), Ա.Պետրոսյան, Լ.Թադևոսյան:

ԼՍԵՑԻՆ. Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 41 անդամներից 29-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը:

Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

Վ.Հովհաննիսյանի օգտին քվեարկել է գիտական խորհրդի 28 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արա Հարությունի Գաբուզյանին համարել ընտրված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում,

3. Միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, դոկտոր Ա.Մարգարյան):

Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ, դոկտոր Ա.Մարգարյան ամփոփ տեղեկություններ ներկայացրեց Լյուբլյանայի համալսարան կատարած ուսումնական այցի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պետական քննական հանձնաժողովների նախագահներն ամփոփ հաշվետվություններ ներկայացրին 2018-2019 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների մասին՝ հատուկ անդրադարձ կատարելով բակալավրիատում բացառապես ավարտական աշխատանքի պաշտպանության եղանակով ամփոփիչ ատեստավորման գործող կարգի ոչ արդյունավետ լինելու խնդրին:

Հաշվետվությունների ամփոփումից հետո նշված խնդրի շուրջ ծավալվեց լայն քննարկում խորհրդի անդամների մասնակցությամբ: Վերջիններիս գնահատմամբ բացառապես ավարտական աշխատանքի պաշտպանության եղանակով բակալավրիատում ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը չի համապատասխանում «Իրավագիտության» բակալավրի կրթական ծրագրի նպատակներին և առհասարակ ուսանողի՝ բակալավրիատում կրթության չորս տարիների ընթացքում ձեռքբերած գիտելիքների ստուգման լավագույն ձևը չէ:

1. Մասնավորապես, իբրև ամփոփիչ ատեստավորման կոնկրետ եղանակի ոչ արդյունավետ լինելու մասին վկայող հանգամանք առանձնացվեց այն, որ ավարտական աշխատանքի պաշտպանությունը և պետական քննական հանձնաժողովի կողմից դրա գնահատումը չի բխում «Իրավագիտության» բակալավրի կրթական ծրագրի այնպիսի նպատակներից, ինչպիսիք են՝ տեսական գիտելիքների հետ մեկտեղ գործնական հիմնարար պատրաստվածություն և իրավաբանական գրագրության գործնական կարողություններ ունեցող մասնագետներ պատրաստելը, ովքեր ունակ են մեկնաբանել ՀՀ օրենսդրության նորմերը, իրականացնել իրավական խորհրդատվություն, իրավական օգնության և ներկայացուցչության գործառույթներ: Դեռ ավելին, բակալավրիատում ստացած կրթության վերջնարդյունքի գնահատման այս ձևը՝ ավարտական աշխատանքի պատրաստումը և հրապարակային պաշտպանությունը, ոչ միայն հնարավորություն չի տալիս ստուգելու ուսանողի գործնական հմտություններն ու կարողությունները, այլև առհասարակ հստակ որոշելու և գնահատելու ուսանողի՝ բակալավրիատում կրթության չորս տարիների ընթացքում ձեռքբերած գիտելիքների (նաև տեսական) իրական մակարդակը: Իրավունքի որևէ ճյուղի շրջանակում ընտրված մեկ թեմայի շուրջ թեկուզև ինքնուրույն և խորքային հետազոտական աշխատանքի իրականացումը թույլ չեն տալիս պարզել ուսանողի գիտելիքների ընդհանուր մակարդակը:

2. Խնդիրն առավել սրվում է, երբ որոշակի հետազոտության արդյունքների ներկայացումը չի արտացոլում անգամ կոնկրետ ոլորտում ուսանողի իրական գիտելիքների մակարդակը, քանի որ դա կարող է լինել ուսանողի ոչ ինքնուրույն աշխատանքի արդյունք (գրագրողության արդյունք, ավարտական աշխատանքը կարող է ձեռք է բերված լինել տարբեր ոչ իրավաչափ աղբյուրներից): Իսկ գրագրողության դեպքերը բացահայտելու, ուսանողի կողմից կատարված աշխատանքի ինքնուրույնության աստիճանը պարզելու անհրաժեշտ մեխանիզմները բացակայում են: Նման դեպքերի բացահայտումը գրեթե անհնար կամ խիստ դժվար է՝ հաշվի առնելով նաև մեկ այլ կարևոր խնդիր, ինչպիսին ավարտական աշխատանքների ղեկավարման հետևանքով առաջացող ծանրաբեռնվածությունն է՝ պայմանավորված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսանողների մեծ թվով (առկա և հեռակա ուսուցման բակալավրիատ և մագիստրատուրա) և ավարտական աշխատանք (նաև մագիստրոսական թեզ) ղեկավարելու իրավունք ունեցող դասախոսների համամասնորեն քիչ թվով:

3. Ամփոփիչ ատեստավորման գործող կարգի պայմաններում չեն բացառվում իրավիճակները, երբ միջին կամ նույնիսկ միջինից ցածր առաջադիմություն ունեցող ուսանողի կողմից ընդհուպ միջև բարձր գնահատականի հավակնող ավարտական

աշխատանք ներկայացնելու պարագայում անգամ գրեթե անհնար է հաստատել աշխատանքի՝ ոչ ինքնուրույն լինելու և այն տարբեր աղբյուրներից ձեռք բերած լինելու փաստը: Ընդ որում այս դեպքում, անկախ հրապարակային պաշտպանության որակից, ներկայացվող պահանջներին լավագույնս համապատասխանող աշխատանքի առկայությունը ինքնին բավարար (բավարարից բարձր) գանահատական ստանալու երաշխիք է: Այս հանգամանքը նաև գործող կարգի կոռուպցիոն ռիսկերի մասին վկայող ցուցիչ է:

Քննարկման արդյունքներով գիտական խորհրդի անդամները հանգեցին այն հետևությանը, որ ամփոփիչ ատեստավորման արդյունավետ եղանակ կարող է լինել բակալավրիատում գործնական առաջադրանքների (իրավիճակային խնդիրներ) լուծման եղանակով գրավոր քննության անցկացումը՝ ամփոփիչ ատեստավորման կարգը «Իրավագիտության» բակալավրի կրթական ծրագրի նպատակներին համապատասխանեցնելու, ինչպես նաև ուսանողներին ապագայում գործնական աշխատանքում տարբեր պետական կառույցների կողմից նմանատիպ եղանակով անկացվող ընդունելության կամ ընթացիկ քննություններին նախապատրաստելու համար: Իբրև նշված կարգի առավելություն՝ նշվեց նաև այն, որ ԵՊՀ իրավագիտության բակալավրիատում տարբեր առարկաներով ընթացիկ ստուգումներն առավելապես իրականացվում են գրավոր խնդիրների լուծման ձևով: Միննույն ժամանակ առաջակվեց գրավոր քննության հետ մեկտեղ բակալավրիատում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար (13 և ավելի բարձր ՄՈԳ), ովքեր հետագայում մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում ուսումնառությունը շարունակելու և հետագոտական գործունեությամբ զբաղվելու ցանկություն և հնարավորություն ունեն, ամփոփիչ ատեստավորումը վերջիններիս ցանկությամբ կազմակերպել և անցկացնել ավարտական աշխատանքի պաշտպանության եղանակով:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) Բակալավրիատում բացառապես ավարտական աշխատանքի պաշտպանության եղանակով ամփոփիչ ատեստավորման գործող կարգը վերանայման անհրաժեշտություն ունի: Առաջարկում ենք իբրև ամփոփիչ ատեստավորման եղանակ նախատեսել բակալավրիատում գործնական առաջադրանքների (իրավիճակային խնդիրներ) լուծման եղանակով գրավոր քննության անցկացումը՝ ամփոփիչ ատեստավորման կարգը «Իրավագիտության» բակալավրի կրթական ծրագրի նպատակներին համապատասխանեցնելու, ինչպես նաև ուսանողներին ապագայում գործնական

աշխատանքում տարբեր պետական կառույցների կողմից նմանատիպ եղանակով անցկացվող ընդունելության կամ ընթացիկ քննություններին նախապատաստելու համար: Մինևույն ժամանակ բակալավրիատում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների (13 և ավելի բարձր ՄՈԳ) համար, ովքեր հետագայում մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում ուսումնառությունը շարունակելու և հետագոտական գործունեությամբ զբաղվելու ցանկություն և հնարավորություն ունեն, ամփոփիչ ատեստավորումը վերջիններիս ցանկությամբ կազմակերպել և անցկացել ավարտական աշխատանքի պաշտպանության եղանակով:

Բ) Միջոցառել ԵՊՀ գիտական խորհրդին միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ` 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1882-Ն հրամանում և բակալավրիատում ամփոփիչ ատեստավորման` ԵՊՀ կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու համար` նշված իրավական ակտերում տեղ գտած` բացառություն նախատեսող մասնագիտությունների շարքում իրավագիտության բնագավառի ուսումնական հաստատություններին ևս հնարավորություն վերապահելով շրջանավարտների ամփոփոփիչ ատեստավորումն իրականացնել ուսումնական հաստատության կողմից սահմանված կարգով` հաշվի առնելով իրավագիտության մասնագիտության առանձնահատկությունները:

4. ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը` ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.` ամբիոնի վարիչ, դոց. Վ.Այվազյան):

Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, դոցենտ Վ.Այվազյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

5. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավաբանական կլինիկայի հաշվետվությունը 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին (զեկ.` Կլինիկայի տնօրեն, դոց. Ք.Վարդանյան):

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի տնօրեն դոց. Ք.Վարդանյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում Կլինիկայի ծավալած գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական:

6. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական հարցերով խորհրդատուներ պրոֆ. Հ.Խաչիկյանի, պրոֆ. Ա.Վաղարշյանի, ասիս. Կ.Ամիրյանի հաշվետվությունը հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքների մասին:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ուսումնական հարցերով խորհրդատուներն ամփոփ տեղեկություններ ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում առաջին կուրսի ուսանողների շրջանում իրականացված ճանաչողական, գիտատեսական և ժամանցային բնույթի միջոցառումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ն.Այվազյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվետվությունը գնահատել դրական:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ 2019թ. ավարտական աշխատանքների, հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրի 2019թ. մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Ամփոփելով սույն թվականի մայիսի 16-24-ն ընկած ժամանակահատվածում Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ ավարտական աշխատանքների, ինչպես նաև հեռակա ուսուցման քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագրի 2019 թվականի մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը՝ նախ ներկայացնեմ արձանագրված ցուցանիշները.

	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չի ներկ.
<i>Քաղաքացիական իրավունք</i>						
Ավարտական աշխ. առկա	22	3	9	10	-	-
Ավարտական աշխ. հեռակա	5	2	-	3	-	-
Պետական քննություն /նախորդ տարվա/	4	-	-	-	4	-
<i>Քաղաքացիական դատավար.</i>						
Ավարտական աշխ. առկա	23	8	12	3	-	-
Ավարտական աշխ. հեռակա	3	1	-	2	-	-
<i>Մագիստրոսական թեզ</i>						
Քաղաքացիական իրավունք	4	-	4	-	-	-
Քաղաքացիական դատավար.	2	-	2	-	-	-
Նախորդ տարվա	1	-	-	1	-	-

Ներկայացված վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ անել բակալավրիատում առկա և հեռակա ուսուցման, ինչպես նաև մագիստրատուրայում հեռակա ուսուցման գործընթացի արդյունավետության, ուսանողների որակի և առաջադիմության, ինչպես նաև քննաշրջանի կազմակերպչական մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես՝ իրենց պատրաստվածությամբ առանձնացել են բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտները: Հատկապես գոհացուցիչ արդյունքներ են արձանագրվել

քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացում. 23 ուսանողներից 8-ն արժանացել է գերազանց գնահատականի, 12-ը ստացել է լավ, 3-ը՝ բավարար, անբավարար գնահատական չի արձանագրվել: Ուրախությամբ պետք է նշեմ, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ այս քննաշրջանում առաջին անգամ ցածր առաջադիմություն (*ՄՈԳ*) ունեցող ուսանողի ավարտական աշխատանքը և պաշտպանությունը գնահատվել է գերազանց և ինչպես պարզվեց պաշտպանության ընթացքում՝ որակյալ ավարտական աշխատանք նախապատրաստելուն նպաստել է նաև տվյալ ուսանողի պրակտիկ աշխատանքը. այս փաստը ևս մեկ անգամ վկայում է ուսուցման կազմակերպման գործընթացում գործնական հմտությունների ձեռքբերման անհրաժեշտության մասին: Որոշակի առաջընթաց են գրանցել նաև հեռակա ուսուցման մագիստրոսները: Ի տարբերություն նախորդ տարիների՝ այս տարի անբավարար գնահատական ընդհանրապես չի արձանագրվել:

Այդուհանդերձ, կցանկանամ Ձեր ուշադրությունը հրավիրել որոշ խնդրահարույց հարցերի վրա, որոնց լուծումը նպաստելու է քննական գործընթացի բարելավմանը: Այսպես՝

1) Թեև այս անգամ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեմաների ընտրությունը որոշ չափով հաջողված էր, քանի որ ուսումնասիրության առարկա էին դարձվել պրակտիկ նշանակություն ունեցող հիմնահարցեր, սակայն ուսանողների մեծամասնությունը դժվարությամբ էր հիմնավորում ընտրված թեմայի արդիականությունը: Այս առումով անհրաժեշտ է ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի նախապատրաստման ու նախապաշտպանության ժամանակ հետևողական լինել, որպեսզի համապատասխան աշխատանքի հեղինակը բավարար չափով հիմնավորի իր ընտրած թեմայի արդիականությունը: Միաժամանակ կարծում եմ, որ թեմաների շարքում պետք է ընդլայնել վարչական դատավարության, աշխատանքային իրավունքի և սնանկության ինստիտուտի խնդրահարույց հարցերը: Թեմաների ընտրության հարցում որպես ուղենիշ կարող են ծառայել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում բարձրացված հարցադրումները:

2) Դարձյալ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի եզրահանգումներին: Որոշ աշխատանքներում կամ այդպիսիք բացակայում էին, կամ թեև առկա էին, սակայն չունեին որևէ գիտական նշանակություն կամ էլ արդեն իսկ ընդունված օրենքների կամ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների վերարտադրությունն էին՝ որպես սեփական եզրահանգումներ:

3) Բավականին խնդրահարույց է նախորդող տարիների պետական քննությունները ձախողած շրջանավարտների մասնակցությունը քննական գործընթացին: Այս տարի նման մասնակցություն է ունեցել 4 անձ և 4-ն էլ գրանցել են անբավարար արդյունք: Այսինքն՝ ստացվում է, որ համալսարանը վերջիններիս հնարավորություն է ընձեռում ևս մեկ անգամ հանձնել քննությունը, հանձնաժողովի անդամներն իրենց ժամանակն են տրամադրում, սակայն նշված անձինք այդպես էլ բավարար գիտելիքներ չեն ցուցաբերում: Առաջարկում եմ նման անձանց մինչ քննությանը մասնակցելու հնարավորություն ընձեռելը պարտադրել անցել վերապատրաստման որոշակի դասընթաց կամ կրկին անցնել ավարտական տարվա ողջ կուրսը կամ ընդհանրապես նման մասնակցություն թույլ չտալ:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նշեմ, որ քննական գործընթացն ընդհանուր առմամբ անցել է բնականոն մթնոլորտում, իսկ բարձրացված հարցադրումները բացառապես նպատակաուղղված են գործընթացի հետագա արդյունավետության բարձրացմանը:

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ե. Խունդկարյան

03.06.2019թ.

Ավարտական աշխատանքների áñ³ĪÁ, ¹ñ³Ýó Ñ»ÕÇÝ³ĪÝ»ñÇ ĪáÕÛÇó ÝÛáóÃÇ
ĩÇñ³á»İÛ³Ý · Ý»ñĪ³Û³óÛ³Ý ĩÇ×³ĪÁ ĩնչպես միշտ հատկապես բավարար են ցերեկային
բաժնի ուսանողների մոտ: Սակայն, դ»é̄̄ē Ī³Ý Ññç³Ý³ĩñĩÝ»ñ, áñáÝù Ç ĩÇ×³ĪÇ ā»Ý
Ññ³á³ñ³Ī³Û³Ý á³ßĩá³ÝáóÃÛ³Ý Á³Û³Ý³Ī Ý»ñĪ³Û³óÝ»É Çñ»Ýó ³ßĒ³ĩ³ÝնÇ մáĩ³Ý¹³ĪáóÃÛ³áóÝÁ,
իմչը վկայում է այն մասին, որ վերջիններս ոչ թե իրենք են տվյալ աշխատանքի
հեղինակը, այլ դա ուղղակի պատվիրել և գնել են: Ինչ խոսք, այս փաստը վերաբերում
է ոչ միայն մեր ամբիոնին, այն ընդհանուր չարիք է և պետք է գտնել նոր լուծումներ:

*Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր.
ԵՊՄՀ իրավագիտության դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ*

Վ. Հովհաննիսյան

14.06.2019թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2018-2019 ուսումնական տարվա առկա և հեռակա բակալավրիատի քրեաիրավական մասնագիտացման ավարտական աշխատանքների, ինչպես նաև հեռակա ուսուցման «Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրի մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի առկա և հեռակա բակալավրիատի քրեաիրավական մասնագիտացմամբ ավարտական աշխատանքների, ինչպես նաև հեռակա ուսուցման «Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրի մագիստրոսական թեզերի՝ ընդհանուր թվով **119 (114 + 5 երկտարեցիներ)** շրջանավարտների ս/թ մայիսի 15-24-ը կայացած պաշտպանությունների արդյունքները վկայում են ընդհանուր առմամբ շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին:

Մասնավորապես, ասվածը հիմնավորվում է ստորև ներկայացվող ցուցանիշներով:

ԱՌԿԱ ավարտական աշխատանքներ	ուսանող	գերագ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	33	11	19	3	—	—
Քրեական դատավարություն	34	10	21	2	—	1
Ընդամենը	67	21	40	5	—	1

ՀԵՌԱԿԱ ավարտական աշխատանքներ	ուսանող	գերագ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	16	—	6	9	1	—
Քրեական դատավարություն	10	1	3	6	—	—
Ընդամենը	26	1	9	15	1	—

ՀԵՌԱԿԱ մագիստրոսական թեզեր 2-րդ կուրս	ուսանող	գերագ. (18-20)	լավ (13-17)	բավ. (8-12)	անբավ. (0-8)	չներկ.
Քրեական իրավունք	12	5	1	4	1	1
Քրեական դատավարություն	9	3	5	1	—	—
Ընդամենը	21	8	6	5	1	1

Ներկայացված ցուցանիշներից հետևում է, որ շրջանավարտների ընդհանուր թվից (114) <<գերագանց>> գնահատական է ստացել **34,2%**-ը, <<լավ>>՝ **62,7%**-ը, <<բավարար>>՝ **28,5%**-ը, <<անբավարար>>՝ **2,28%**-ը, *պաշտպանությանը չեն ներկայացել 2,28%*-ը:

Ընդ որում, <<Քրեական իրավունք>> առարկայից առկա ուսուցմամբ 33 ավարտական աշխատանքներ իրականացրած շրջանավարտներից երեքը գնահատվել են <<20>>, երկուսը՝ <<19>>, վեցը՝ <<18>>, երեքը՝ <<17>>, ինը՝ <<16>>, երկուսը՝ <<15>>, չորսը՝ <<14>>, մեկը՝ <<13>>, մեկը՝ <<10>> և երկուսը՝ <<8>> միավոր: Անբավարար գնահատական և չներկայացած ուսանող չի գրանցվել: Հեռակա ուսուցմամբ 16 շրջանավարտների պարագայում <<գերագանց>> գնահատական (18-20 միավոր) չի գրանցվել, <<16>> միավոր ստացել է մեկ, <<14>>՝ մեկ, <<13>>՝ չորս, <<11>>՝ երկու, <<10>>՝ երկու, <<9>>՝ երկու, <<8>>՝ երեք, իսկ անբավարար գնահատական՝ <<4>> միավոր՝ մեկ ուսանող: Չներկայացած ուսանող չի գրանցվել: Արդյունքում, տվյալ առարկայից *միջին հավասարակշռված թվաքանակական գնահատականը կազմել է 15,93 միավոր առկայում, իսկ 11,33 միավոր՝ հեռակայում:*

<<Քրեական դատավարություն>> առարկայից առկա ուսուցմամբ 34 շրջանավարտներից չորսը գնահատվել են <<20>>, վեցը՝ <<18>>, չորսը՝ <<17>>, հինգը՝ <<16>>, չորսը՝ <<15>>, հինգը՝ <<14>>, երեքը՝ <<13>>, մեկը՝ <<11>> և մեկը՝ <<10>> միավոր: Մեկ ուսանող չի ներկայացել, անբավարար չի գրանցվել: Հեռակա ուսուցմամբ 10 շրջանավարտներից մեկը գնահատվել է <<19>>, մեկը՝ <<14>>, երկուսը՝ <<13>>, երկուսը՝ <<12>> և չորսը՝ <<10>> միավոր: Չներկայացած և անբավարար գնահատական չի գրանցվել: Արդյունքում, տվյալ առարկայից *միջին հավասարակշռված թվաքանակական գնահատականը կազմել է 15,93 միավոր առկայում, իսկ 12,3 միավոր՝ հեռակայում:*

<<Քրեական իրավունք և դատավարություն>> մագիստրոսական ծրագրով ընդհանուր թվով **21 շրջանավարտներից** պաշտպանության են ներկայացել **20-ը**:

<<**Քրեական իրավունք**>> առարկայից մագիստրոսական **12 թեզերի** պաշտպանության արդյունքում մեկ շրջանավարտ գնահատվել է <<19>>, չորսը՝ <<18>>, մեկը՝ <<13>>, մեկը՝ <<12>>, երկուսը՝ <<10>>, մեկը՝ <<9>> և մեկը՝ անբավարար՝ <<4>> միավոր: Մեկ մագիստրանտ չի ներկայացել պաշտպանության:

<<**Քրեական դատավարություն**>> և <<**Կրիմինալիստիկա**>> առարկաներից մագիստրոսական **9 թեզերի** պաշտպանության արդյունքում մեկ շրջանավարտ գնահատվել է <<20>>, երկուսը՝ <<18>>, մեկը՝ <<16>>, երկուսը՝ <<15>>, երկուսը՝ <<13>> և մեկը՝ <<9>> միավոր: Անբավարար գնահատական և չներկայացած ուսանող չի գրանցվել: Արդյունքում, նշված մասնագիտացման **միջին հավասարակշռված թվաքանակն գնահատականը կազմել է 14,3 միավոր**:

Նախորդ տարիներից պարտք ունեցողներից **բանավոր քննությանը մասնակցել է 5 ուսանող**, որոնցից 2-ը միասնական քննություն են հանձնել (Քրեական իրավունք և Քրեական դատավարություն), որի արդյունքում ստացել են <<11>> և <<13>> միավոր: Երկու ուսանող հանձնել է <<Քրեական դատավարություն>> առարկայից բանավոր քննություն՝ ստանալով <<10>> և <<8>> միավոր, իսկ մեկը՝ <<Քրեական իրավունք>> առարկայից՝ ստանալով <<8>> միավոր:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների և շրջանավարտների կողմից բարեխիղճ աշխատանք է կատարվել ինչպես մագիստրոսական թեզերի պատրաստման, այնպես էլ հրապարակային պաշտպանությանը նախապատրաստվելու ուղղությամբ:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նշված աշխատանքներից մի քանիսում արտացոլված էին մագիստրանտների սեփական հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա առաջ քաշված ինքնատիպ եզրահանգումներն ու գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները: Բացի այդ, հատկապես բարձր գնահատականներ ստացած շրջանավարտները քաջատեղյակ էին ոչ միայն գործող օրենսդրական ակտերում առկա իրավակարգավորումներից, այլև իրավակիրառ պրակտիկայում գոյու-

թյուն ունեցող վիճահարույց, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող խնդիրներից և շրջանառության մեջ դրված համապատասխան օրինագծերից:

Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների գրեթե բոլոր հեղինակները տիրապետում էին նյութին և, որպես կանոն, կարողանում էին ոչ միայն առանց գրավոր տեքստի ներկայացնել իրենց աշխատանքում տեղ գտած հիմնադրույթները, այլև՝ հիմնականում սպառիչ պատասխաններ տալ քննական հանձնաժողովի անդամների կողմից առաջադրված հարցերին և արձագանքել գրախոսականներում առկա դիտողություններին:

Մինևույն ժամանակ, թե՛ թեզերի և թե՛ ավարտական աշխատանքների վերաբերյալ ինչպես գիտական ղեկավարների կարծիքները, այնպես էլ գրախոսականները լիովին համապատասխանում էին ներկայացվող պահանջներին: Այդ առումով, սակայն, որոշակի մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գրախոսականներում հաճախ նշված էին նաև տեխնիկական բնույթի թերություններն ու բացթողումները, ինչը պետք է անպայմանորեն հաշվի առնվի համապատասխան ամբիոնների և ղեկավարների աշխատանքները հետագայում կազմակերպելիս:

Բացի այդ, հրապարակային պաշտպանության գործընթացն էապես կշահեր, եթե դրան ներկա գտնվեին բոլոր գրախոսողները: Տվյալ հանգամանքը, կարծում եմ, առավել կարևորվում է այն պարագայում, երբ գրախոսականում առկա են խիստ և բացասական գնահատականներ:

Մտահոգության տեղիք է տալիս նաև աշխատանքների մեծ մասում իրավակիրառ պրակտիկայի նյութերի և դրանց վերլուծության արդյունքների պակասը: Լավագույն դեպքում մագիստրանտները գլխավորապես օգտվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից: Ընդ որում, առավել հաճախ բավարարվել էին պարզապես դրանք վկայակոչելով կամ մեջբերելով: Մինչդեռ, առավել ցանկալի կլիներ, եթե դրանք մանրամասն վերլուծվեին, այդ թվում՝ քննադատական մոտեցման դիրքերից՝ անդրադառնալով այդ որոշումներում տեղ գտած վիճահարույց և ոչ միանշանակ ընկալվող դիրքորոշումներին: Ընդ որում, նման մտահոգությունն նախկինում ևս արտահայտվել է, սակայն վիճակի էական փափախություն այդ կապակցությամբ չի արձանագրվել:

Այդ առումով, թերևս, նպատակահարմար է պայմաններ ստեղծել, որպեսզի մագիստրանտները հնարավորություն ունենան ծանոթանալու թեզի թեմային առնչվող

պրակտիկ նյութերին: Նման պայմաններ ստեղծելու տեսանկյունից, կարծում եմ, անելիք ունեն հատկապես գիտական ղեկավարները:


Խիստ վիճահարույց եմ համարում նաև բակալավրիատի բոլոր շրջանավարտների համար ավարտական աշխատանք պատրաստելու պահանջը: Նման մոտեցման պարագայում ոչ միայն առաջ են գալիս բազմաթիվ տեխնիկական խնդիրներ, այլև հնարավոր չի լինում ստուգելու բակալավրի կոչման հավակնորդների մնացորդային գիտելիքները: Այդ առումով առաջարկում եմ ավարտական աշխատանք պատրաստելը, շրջանավարտի ընտրությամբ, թույլատրել միայն որոշակի միջին միավորի նվազագույն շեմն ապահովող ուսանողներին: Ընդ որում, այդ շեմը պետք է բավական բարձր լինի:

Ամփոփելով վերը քննարկված հանգամանքները՝ կարելի է եզրակացնել, որ քննական հանձնաժողովին հաջողվեց ձևավորել պատշաճ քննական մթնոլորտ և իրականացնել իր հիմնական գործառույթները:

Հատկապես հարկ է կարևորել այն հանգամանքը, որ թեզերի և ավարտական աշխատանքների ու դրանց հրապարակային պաշտպանության գնահատումներն իրականացվել են հանձնաժողովի բոլոր անդամների, ինչպես նաև ղեկավարների ու գրախոսողների կարծիքները հաշվի առնելով՝ կոնսենսուսի եղանակով և ի օգուտ շրջանավարտի: Ուշագրավ է, որ նրանցից յուրաքանչյուրի կողմից նշանակված գնահատականների միջև էական շեղումներ չկային: Հավանաբար, հենց դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ շրջանավարտների կողմից որևէ դժգոհություն (համենայն դեպս՝ նկատելի) չի եղել:

Պետական քննական

հանձնաժողովի նախագահ



Ս. Առաքելյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*«ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՍՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ» ԾՐԱԳՐՈՎ
2018-2019թթ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պետական քննություններ:

2019թ. մայիսի 13-ին և 14-ին տեղի ունեցավ նախորդ տարիների շրջանավարտների պետական քննություն Պետության և իրավունքի տեսություն, Սահմանադրական իրավունք առարկաներից: Քննությանը ներկայացան 8 ուսանող, որոնցից 1 ուսանող ստացավ «լավ» գնահատական, 1 ուսանող՝ «բավարար» գնահատական, 5 ուսանող՝ «անբավարար» գնահատական, 1 ուսանող չէր ներկայացել քննության:

Ավարտական աշխատանքների պաշտպանություն:

2019թ. մայիսի 13-ին և 14-ին տեղի ունեցավ «Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք» ծրագրով ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Պաշտպանության ներկայացվեց 32 ավարտական աշխատանք (23-ը առկա, 9-ը՝ հեռակա ուսուցման), որոնցից 5 ուսանող ստացավ «գերազանց» գնահատական, 7 ուսանող «լավ» գնահատական, 20 ուսանող՝ «բավարար» գնահատական:

Ընդհանուր քնույթի եզրահանգումներ:

Պետական քննական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են իրավագիտության ֆակուլտետի դեկանատի կողմից նախատեսված ժամանակացույցին համապատասխան:

Պետական քննությունները և ավարտական աշխատանքների պաշտպանությունն իրականացվել են հրապարակայնորեն՝ նախատեսված նորմատիվ պահանջների պահպանմամբ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի և պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի կողմից ավարտական աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ հաշվի են առնվել իրավական մտքի արդի զարգացումները և այն մարտահրավերները, որոնց իրավական կարգավորումները ժամանակակից հասարակական

հարաբերությունների կանոնակարգման տեսանկյունից ունեն առաջնահերթ նշանակություն:

Թեև առկա էին առանձին աշխատանքներ, որոնք աչքի էին ընկնում իրենց որակով և հեղինակների կողմից նյութի տիրապետման և ներկայացման աստիճանով, սակայն ավարտական աշխատանքների մեծամասնությունն ուներ սոսկ ճանաչողական, նկարագրական բնույթ, աշխատանքի շրջանակներում վերհանված չէին թեմային առնչվող առկա խնդիրներն ու առաջարկված չէին դրանց համար համապատասխան լուծումներ, հետևաբար, բացակայում էր իրականացված հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, որպիսի հանգամանքները ցանկացած գիտական աշխատանքի առանցքն են հանդիսանում: Կարծում եմ, որ նշված խնդիրներն առաջիկայում ունեն հաղթահարման անհրաժեշտություն՝ առաջին հերթին գիտական աշխատանքներին ներկայացվող չափանիշների վերաիմաստավորման և աշխատանքների ներկայացման հմտությունների զարգացման տեսանկյունից, և պետք է անընդհատ գտնվեն ամբիոնների և ուսանողների ուշադրության կենտրոնում:

Աշխատանքների մեծամասնությունում վերլուծված էր սոսկ հայկական և ռուսական գրականություն, մի շարք դեպքերում գրականությունը բավականին հնացած էր, իսկ առանձին աշխատանքների պարագայում բացակայում էր համարժեք **գիտական** գրականության վերլուծությունը: Ուստի, կարևոր ենք համարում նաև համարժեք գիտական գրականության ընտրությունն ու դրա պատշաճ վերլուծության մեթոդաբանության վերաիմաստավորումը:

Թեև աշխատանքների մի մասն իրականացված էր ներկայացվող ձևական պահանջների պահպանմամբ, սակայն առկա էին մի շարք աշխատանքներ, որոնք չէին համապատասխանում ներկայացվող ձևական պահանջներին: Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ աշխատանքի՝ պահանջվող բովանդակային մասերի վերնագրերի առկայությունը չէ, որ վկայում է պահանջների պահպանվածության մասին: Անհրաժեշտ է համապատասխան մասերի բովանդակությունը շարադրել՝ դրանց ենթադրյալ համատեքստին համապատասխան: Օրինակ՝ աշխատանքի նպատակին և խնդիրներին առնչվող հատվածը չի կարող վերաբերել զուտ թեմայի նկարագրությանը, կամ թեմայի արդիականությանն առնչվող հատվածը պետք է ուղղված լինի հեղինակի կողմից թեմայի արդիականության հիմնավորումներին և ոչ այլ տեղեկատվության մատուցման:

Աշխատանքների առնչությամբ ներկայացված գրախոսականների մեծամասնությունը ևս կատարված էին պատշաճ մակարդակով: Միևնույն ժամանակ, առկա էին գրախոսականներ, որոնցում բացակայում էին աշխատանքի գնահատման համար անհրաժեշտ հանգամանքների վերլուծությունն ու դրանց առնչվող

եզրահանգումների շարադրումը, ինչը գրախոսականների առանցքը պետք է հանդիսանա, ուստի այդ հանգամանքը ևս պահանջում է բավարար ուշադրություն:

Կարծում եմ, որ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև ուսանողների մոտ վերլուծական մտածողության և նյութը ներկայացնելու հմտությունների զարգացմանը: Այդ առումով առաջնահերթ նշանակություն ունի կարծրատիպային և մեխանիկական մտածողության հաղթահարումը, ինչը երբեմն նկատելի է ուսանողների մոտ: Դասագրքում կամ ձեռքի տակ եղած իրավական ակտում ներկայացված գաղափարների մեխանիկական վերարտադրությունը չի կարող գիտելիքի գնահատման և գիտական հետազոտության իրականացման առանցքային չափանիշ հանդիսանալ: Ավելին, դասագիրքն էլ ուսանողի կողմից չպետք է դիտարկվի որպես հիմնախնդրին ծանոթանալու միակ աղբյուր: Հետևաբար, գիտական հետազոտության իրականացման ու հետազայում դրա գնահատման հիմնական չափանիշը պետք է լինի ոչ թե կարդացածի անգիր ու մեխանիկական վերարտադրությունը, այլ կատարված գիտական հետազոտության որակն ու այն ներկայացնելու հմտությունները:

Աշխատանքին համարժեք գնահատականի ձևավորման տեսանկյունից չափազանց մեծ կարևորություն ունի պետական քննական հանձնաժողովի անդամների կողմից գնահատականների ձևավորումը ներկայացվող գնահատման չափանիշներին համապատասխան, ինչին ևս հարկ է ցուցաբերել բավարար ուշադրություն:

**Պետական քննական հանձնաժողովի նախագահ,
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր,
Ի.Գ.Թ., դոցենտ
30.05.2019թ.**

Ա. Մանասյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018-2019 ուս. տարի
Սահմանադրական իրավունքի ամբիոն

Ամբիոնի կազմը

Ամբիոնի վարիչ՝ Այվազյան Վարդան Նորիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
Պրոֆեսորասպասխոսական կազմը՝

- 1) Այվազյան Նորիկի Անուշավանի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
- 2) Դանիելյան Գևորգ Բալաբեկի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
- 3) Մուրադյան Սամվել Վիլիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 4) Ենգոյան Հասմիկ Ալեքսանդրի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 5) Մուղնեցյան Գնել Սամվելի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 6) Բադալյան Սայադ Սուքիասի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

- 1) Թամազյան Արամ Արծվիի, իրավ. գիտ. դոկտոր,
- 2) Հարությունյան Գագիկ Գարուշի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
- 3) Մախմուդյան Ռուստամ Ջասմի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 4) Մանասյան Անահիտ Արտյոմի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 5) Ռաֆայելյան Վահե Վարուժանի իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
- 6) Սարոյան Պարզև Վոլոդյայի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
- 7) Նադդալյան Տիգրան Գրիգորի իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
- 8) Սարգսյան Մերի Մնացականի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ:

Ուսումնասօժանդակ աշխատակիցներ

- 1) Ղազարյան Անահիտ Արտեմի, ավագ լաբորանտ,

2018-2019 ուս. տարի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտահետազոտական աշխատանքները

Ուսումնամեթոդական աշխատանքներ:

Ամբիոնի կողմից ուսումնամեթոդական աշխատանքներն իրականացվել են ուսումնական գործընթացին առնչվող իրավական ակտերի պահանջներին և սահմանված ուսումնական ծրագրերին համապատասխան: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել ու ժամանակակից մեթոդաբանության պահանջներին են համապատասխանեցվել դասընթացների ծրագրերը և քննական հարցաշարերը՝ հաշվի առնելով այն, որ դրանք անմիջականորեն առնչվում են օրենսդրության այն ճյուղերին, որոնցում կատարվել են էական փոփոխություններ, միաժամանակ, մտադիր ենք շարունակելու աշխատանքներն այս ուղղությամբ՝ նկատի ունենալով դարձյալ վերջին շրջանում գործադիր իշխանության համակարգում կատարված կառուցակարգային ու գործառությանին էական փոփոխությունները: Նշված ոլորտում ամբիոնի գործունեության առանձնահատկություններից է այն, որ առանձին առարկաներ դասավանդվում են

համալսարանի մի շարք ֆակուլտետներում. Ժուռնալիստիկայի, միջազգային հարաբերությունների, աշխարհագրության, քաղաքագիտության, տնտեսագիտության, ինչը հիմք է տալիս, որպեսզի ամբիոնում դասընթացների ծրագրերը կազմվեն ու իրացվեն՝ հաշվի առնելով նաև այդ լսարանների էական առանձնահատկությունները: Ընդ որում, այդ կտրվածքով իրականացված գործունեության առնչությամբ ստացվել են դրական արձագանքներ: Այս ուսումնական տարում Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մագիստրատուրայում կղասավանդվի <<ՀՀ սահմանադրության հիմնահարցերը>> նոր դասընթացը: Առաջիկայում նախատեսվում է ծրագրերից ու հարցաշարից զատ, վերանայել նաև դասավանդվող նյութը. այս փուլում դեռևս հիշյալ ֆակուլտետներին տրվում է ընդհանուր կարգով մշակված նյութը, պարզապես հստակեցվում է, թե դրա որ մասն է իրենց ծրագրին առնչվում: Մասնավորապես, մտադիր ենք վերանայել Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում «Մահմանադրական իրավունք» դասընթացի ծրագիրը, այն ներկայիս ծավալով և ընտրված հարցադրումներով ներկայացնելը, կարծում ենք, հիմնավորված չէ:

Բոլոր դեպքերում, յուրաքանչյուր ուսումնական տարի դասավանդման նյութը թարմացվում է էլեկտրոնային տարբերակով և դասախոսությունների թեզիսների տեսքով զետեղվում ֆակուլտետի կայքում, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին իրազեկված լինել դասավանդվող առարկային առնչվող օրենսդրության փոփոխություններին, ինչպես նաև տեսական նոր մոտեցումներին: Այս տեսանկյունից ամբիոնի ծանրաբեռնվածությունը ներկա փուլում անհամեմատ մեծ է, քանի որ սահմանադրական փոփոխություններին զուգահեռ աննախադեպ հարափոփոխ են դարձել գործադիր իշխանության կազմավորման ու գործունեության իրավական հիմքերի փոփոխությունները: Ստացվում է այնպես, որ մենք այդպիսի փոփոխություններ ենք արձանագրում անգամ տարեկան երկու-երեք անգամ: Այս իրավիճակում նախապատվությունը տալիս ենք ուսանողներին՝ հիշյալ ոլորտին առնչվող առավել առանցքային հարցադրումների լուսաբանմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփմամբ դեկանատի նիստում կայացած որոշումը, ամբիոնում ևս որոշվել է հստակեցնել այն աղբյուրների շրջանակը, որոնք առավել մեծ չափով են համապատասխանում ներկայացվող ծրագրի բովանդակությանը և հնարավորություն կտան ապահովելու դասավանդվող նյութի որոշակի միասնականություն:

Հաշվի առնելով հանրային ծառայության առնչությամբ հանրային մեծ պահանջարկը, այդ թվում՝ «իրավագիտություն» մասնագիտություն դասավանդող մյուս բուհերի կողմից, ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են ընթանում «Հանրային ծառայություն» ուսումնական ձեռնարկի պատրաստման ուղղությամբ:

Ամբիոնը ձեռնամուխ է եղել մի շարք առարկաներով խնդիրներ մշակելու և դրանցով միջանկյալ քննություններ անցկացնելու աշխատանքներին: Արդեն մեծ քանակ են կազմում «Մահմանադրական իրավունք», «Վարչական իրավունք», «Ֆինանսական իրավունք», «Բանկային իրավունք» առարկաներին առնչվող մշակված և որոշակի կիրառման փորձ անցած խնդիրները, ինչը հնարավորություն է տալիս ծրագրավորելու հաջորդ ուսումնական տարվա ընթացում խնդիրների ժողովածուների թողարկումը: Այս փուլում քննարկում ենք առաջին փուլում հրատարակել միայն մեկ ժողովածու, որում կներառվեն վերը նշված առարկաներին վերաբերող խնդիրները: Հետագայում, երբ կկուտակվի բավարար նյութ, կարող ենք

նախապատվությունը տալ առարկայական ձեռնարկներին: Միաժամանակ, այս փուլում կազմվող ձեռնարկի ներքին տրամաբանական կառուցվածքն ապահովելու նկատառումով, փորձում ենք ներառել միայն այնպիսի խնդիրներ, որոնք այս կամ այն չափով առնչվում են հարակից դասընթացների նյութի հետ:

Լրացուցիչ վերանայվել են պրակտիկայի ծրագրերը. դրանք ոչ միայն համապատասխանեցվել են գործող օրենսդրությանը, այլև հաստատվել են ենթածրագրեր հաշվի առնելով յուրաքանչյուր գերատեսչության առանձնահատկությունները: Կարծում եմ, նոր ծրագրերն առավել դյուրին ու կանխատեսելի կդարձնեն պրակտիկայի իրականացումը:

Ամբիոնում բոլոր ավարտական և մագիստրոսական աշխատանքների պատրաստման գործընթացը գտնվում էր ինչպես անմիջական ղեկավարի, այնպես էլ ամբիոնի վարիչի հսկողության ներքո: Անհատական ժամանակացույցով իրականացված հանդիպումների ընթացքում կազմակերպվել են քննարկումներ, տրվել է համապատասխան խորհրդատվություն և ստուգվել կատարված աշխատանքը: Մեծ ուշադրություն է դարձվում նաև ընդդիմախոսությունների որակի վրա, մասնավորապես, ներկայացվող պահանջներին չբավարարող եզրակացությունները ետ են վերադարձվել կոնկրետ դիտողություններով:

Ինչպես դասախոսությունների, այնպես էլ սեմինար պարապմունքների կազմակերպման գործընթացում ձախողումներ չեն արձանագրվել, իսկ ոչ էական շեղումները դարձել են համապատասխան կարգով քննարկման նյութ: Ընդհանուր առմամբ ամբիոնի դասախոսական կազմն առանձնանում է կարգապահությամբ և ամբիոնում անհրաժեշտ աշխատանքային մթնոլորտ ձևավորելու ձգտումներով:

Սեմինար պարապմունքներում ներդրվել է մշակված խնդիրներին իրենց բովանդակությամբ մոտ խնդիրներ քննարկելու և լուծումներ առաջադրելու, ինչպես նաև թեմային առնչվող տվյալ պահին հասարակական մեծ հնչեղություն ձեռք բերած իրավական բնույթի իրավիճակների, այդ թվում՝ վիճահարույց օրենսդրական դրույթների համակողմանի վերլուծության պրակտիկան:

Ամբիոնում, հիմնականում, լուծված է միննույն դասընթացն առնվազն երկու դասախոսներով դասավանդելու խնդիրը:

Գիտամանկավարժական կադրերի պարասպորման ուղղությամբ կատարված աշխատանքներ:

Ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներն են իրականացնում թվով 4 ասպիրանտ (որոնցից 1-ը՝ առկա, 3-ը՝ հեռակա):

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվել է ընդհանուրը 38 գիտական աշխատանք (նախատեսված է եղել 15-ը): Հրատարակվել է 1 /մեկ/ մենագրություն, 1/մեկ/ գիտամեթոդական ձեռնարկ՝ համահեղինակությամբ: Թեպետ նախատեսված էր ավարտին հասցնել «Ֆինանսական իրավունք» ուսումնական ձեռնարկը, սակայն այն հետաձգվեց, քանի որ Ազգային ժողովում հետաձգվեց նաև ՀՀ հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելը: Այժմ այդ խնդիրը լուծելու ճանապարհին խոչընդոտ չկա, ուստի

հաջորդ հաշվետու տարում, մասնավորապես՝ մինչև 2018 թ. դեկտեմբերը հիշյալ ուսումնական ձեռնարկը պատրաստ կլինի:

Ամբիոնի անդամները զեկույցներով մասնակցել են միջազգային և հանրապետական մի շարք գիտաժողովների: Մասնավորապես, կարելի է առանձանցնել՝

Մասնակցություն միջազգային խորհրդաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների

2018թ. նոյեմբերի 16 –ին տեղի ունեցավ ակադեմիկոս Վ. Ներսեսյանցի 80-ամյակին նվիրված գիտաժողով, որտեղ որտեղ զեկույցով հանդես եկան ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Դանիելյանը, ի.գ.թ., դոցենտ Վ. Այվազյանը, ի.գ.թ., դոցենտ Ա. Մանասյանը:

2018 թ.դեկտեմբերի 10-11-ը տեղի է ունեցել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը, որտեղ զեկույցով հանդես եկան սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտներ Սոսե Բարսեղյանը և Տաթևիկ Նահապետյանը:

2018թ. դեկտեմբերի 12-ին տեղի է ունեցել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողով, որտեղ զեկույցով հանդես են եկել սահմանադրական իրավունքի ամբիոնի դասխոսներ՝ ի.գ.դ., պրոֆեսոր Գ. Դանիելյանը և ի.գ.թ., դոցենտ Հ. Ենգոյանը:

Հուլիսի 5-ին սահմանադրական իրավունքի ամբիոնը «Հայոց արարման հավաք» հասարակական կազմակերպության հետ համատեղ անցկացնելու է «Նոր սահմանադրություն՝ հանուն արարող Հայաստանի» խորագրով սեմինար քննարկում, որին մասնակցելու են երկրի քաղաքական և գիտական լայն շրջանակներ:

1. 2018թ. հոկտեմբերի 1-12 – Կին դատավորների ազգային միության 40-րդ ամենամյա կոնֆերանս, ԱՄՆ, Սան Անտոնիո:
2. 2018թ. հոկտեմբերի 18-19 – Կանանց արդարադատության մատչելիության թեմայով միջազգային խորհրդաժողով, Ստրասբուրգ, Ֆրանսիա, *նշված թեմատիկայով ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից ձեռնարկվող քայլերի առնչությամբ՝ զեկույց:*
3. 2018թ. նոյեմբերի 27-29 – ուսումնական այց Վիեննա, Ավստրիա՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման հարցերով:
4. 2019թ. փետրվարի 27-29 – Բնապահպանական հարցերով արդարադատության մատչելիության թեմայով դատական քոլոքվիում, Ժնև, Շվեյցարիա, *ելույթ են ունեցել Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական հարցերով արդարադատության մատչելիությանն առնչվող զարգացումներին վերաբերող զեկույցով:*
5. 2019թ. մայիսի 10 – Արցախի պետական համալսարանում տեղի է ունեցել Ա. Մանասյանի մենագրության քննարկումը:

6. «Regional conference on Gender and Juvenile Justice in the Middle East» (Մերձավոր Արևելքում գենդերային և անչափահասների հարցերով արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային համաժողով) թեմայով գիտաժողով, կազմակերպված Կառլտոնի համալսարանի կողմից (Կանադա), 26-29 ապրիլի, 2019թ. Ստամբուլ, Թուրքիա, «Ամուսնության տարիքը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով զեկույց:

7. 2018 թվականի դեկտեմբերի 4-5-ը Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում «Քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով միջազգային կոնֆերանս» խորագրով հանդիպում: Հանդիպման ժամանակ Ս. Բարսեղյանի կողմից ներկայացվել է քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ ՀՀ օրենսդրական կարգավորումները և նախատեսվող օրենսդրական բարեփոխումները:

8. 2. The Nelson Mandela World Human Rights Moot Court Competition՝ նվիրված մարդու իրավունքների միջազգային պաշտպանությանը: Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի թիմը մասնակցել է մրցույթի առաջին փուլին և հաջողությամբ անցել երկրորդ փուլ, որը տեղի է ունենալու Շվեյցարիայի Ժնև քաղաքում: 2019թ. մարտ-ապրիլ ամիսներին մարզչական աշխատանքներ են տարվել թիմի նախապատրաստման և առաջին փուլի մասնակցության համար:

9. 3. Ժնև, Շվեյցարիա, 2019թ. մարտի 13-ին «Ապաստանի համակարգի որակի նախաձեռնությունը Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կայացած ռեգիոնալ կոնֆերանսին մասնակցություն: Կոնֆերանսը վարում էին Միացյալ ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) Ռեգիոնալ Եվրոպական գրասենյակի կողմից:

10.4. Ք. Ստրասբուրգ, Ֆրանսիա, 2019թ. մարտի 25-29-ին Եվրոպայի խորհրդի Միգրացիան և մարդու իրավունքները աշխատանքային խմբի 6-րդ գումարման հանդիպման մասնակցություն, որի ընթացքում մշակվել է «Միգրացիայի հետևանքով կալանավորման այլընտրանքները» ձեռնարկը:

Ուսանողների համար կազմակերպված միջոցառումներ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում դասավանդվող «ՀՀ ընտրական իրավունք» և «Ընտրական իրավունքի սահմանադրական և կոնվենցիոն երաշխիքները» առարկաների շրջանակներում 2019թ. մայիսի 21-ին մեր ուսանողները Հասմիկ Ենգոյանի ղեկավարությամբ «Բաց դաս» անցկացրին ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներկայացնողներ ԿԸՀ նախագահ Տ. Մուկույան, ԿԸՀ քարտուղար Ա. Սմբատյան, ԿԸՀ իրավաբանական վարչության պետ Լ. Հակոբյան, ԿԸՀ անդամ Ն.Հովհաննիսյան:

2019 թ. մայիսի 20-ին և 22 ին Գերմանական միջազգային համագործակցության ընկերության իրավական ծրագրի նախաձեռնությամբ, իրավաբանական կրթության աջակցության միջոցառումների շրջանակներում ուսանողները մասնակցեցին դոկտոր, պրոֆ.Ռ. Ռուբելի «Սահմանադրական իրավունքի ազդեցությունը վարչական վարույթի և դատավարության վրա» վարած դասախոսությանը՝ իրավագիտության ֆակուլտետում:

1. 2018թ. դեկտեմբերի 11 – սահմանադրական իրավունքի դասընթացի շրջանակներում 2-րդ կուրսի 2-րդ հոսքի ուսանողների համար կազմակերպել են հանդիպում-դասախոսություն ի.գ.դ., դոկտոր Գագիկ Հարությունյանի հետ
2. 2019թ. մայիսի 23 - սահմանադրական իրավունքի դասընթացի շրջանակներում 2-րդ կուրսի 2-րդ հոսքի ուսանողների համար կազմակերպել են Սահմանադրական դատարանի ուսումնական դատական նիստ:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքները՝ թվային տեսքով՝

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկույցներ, թեզիսներ
0	1	0	1	38	11

Գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքներ:

Ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներն են իրականացնում թվով 4 ասպիրանտ (որոնցից 2-ը՝ առկա, 2-ը՝ հեռակա):

Ուսանողության հետ տարվող աշխատանքը:

Ուսանողության հետ տարվող աշխատանքը կազմակերպվում է մի քանի ուղղություններով, որոնցում աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում արդիական ու հրատապ հարցադրումներով գիտական բանավեճեր կազմակերպելուն: Տարբեր ձևաչափերով (խնդիրների հակոդմանի քննարկումներ, բանավեճեր, դատախաղեր, այլ կառույցների մասնագետների հետ հանդիպումներ և այլն) կազմակերպվել է այդ

բնույթի միջոցառում: Ուսանողական ՈԻԳԸ-ն ևս այս հարցում նախաձեռնողական կեցվածք ունի:

1. Մարտի 15-ին տեղի ունեցավ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպված «ՀՀ Սահմանադրության էվոլյուցիան» խորագիրը կրող սեմինար-քննարկումը, որը վարեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. դոցենտ պրն. Վարդան Այվազյանը: Քննարկման թեման նախօրոք ընտրվել էր ուսանողական հանրույթի և բանախոսի կողմից, քանի որ 1995թ.-ին ընդունված ՀՀ սահմանադրության կրկնակի փոփոխությունները (2005թ. և 2015թ.) որոշակի վիճահարույց հարցեր են առաջացրել՝ կապված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ամրագրող և պետական կառավարման համակարգը ձևավորող իրավական դրույթների բովանդակային փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Պարոն Այվազյանը համապարփակ կերպով ներկայացրեց սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության դերն ու նշանակությունը, առաջնային մի շարք դրույթների ընդունման տրամաբանությունը, դրանց փոփոխման, ուղղման կամ լրացման ընթացակարգը՝ համեմատական վերլուծության ենթարկելով մի շարք ժողովրդավարական պետությունների Հիմնական օրենքի հետ: Խոսվեց նաև կիսանախագահական և խորհրդարանական հանրապետության՝ որպես պետական կառավարման ձևի սկզբունքային տարրերի մասին, քննարկվեց դրանց համապատասխանությունը հայ իրականությանը: Ներկաները իրենց հետաքրքրող հարցերը հղեցին բանախոսին և ստացան հիմնավոր պատասխաններ: Հատկանշական է, որ ներկա գտնվողների մեջ կային նաև հյուրեր Ֆրանսիական և Սլավոնական համալսարանների իրավագիտության ֆակուլտետներից, ինչը խոսում է թեմայի հետաքրքրության բարձր աստիճանի մասին: Քննարկման վերջում պրն. Այվազյանը խորհուրդ տվեց ուսանողներին աշխատել իրավագիտակցության մակարդակը նոր աստիճանի բարձրացնելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա խորապես ընկալելու սահմանադրական նորմերի բովանդակությունը:

2. Մայիսի 23-ին տեղի ունեցավ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպված ԱԺ սիմուլյացիոն նիստը: Օրակարգում ՀՀ Սահմանադրության 112-րդ հոդվածով նախատեսված՝ պատգամավորների կողմից Կառավարությանը գրավոր և բանավոր հարցեր ուղղելու ինստիտուտն էր:

Ուսանողները հանդես եկան ԱԺ նախագահի, ԱԺ պատգամավորների, վարչապետի և նախարարների պաշտոններում: Պատգամավորները համապատասխան ոլորտի նախարարներին հնչեցրած հարցերի վերաբերյալ ստացան համապարփակ պատասխաններ: Վեր հանված հարցերը վերաբերում էին արդարադատությանը, բնապահպանությանը, կրթությանը, արտաքին գործերին: Հատկանշական է, որ քննարկվեցին արդիական խնդրահարույց հարցեր, ինչպիսիք են՝ անցումային արդարադատությունը, կրթական համակարգի բարելավումը, Լեռնային Ղարաբաղի հարցում առկա հակամարտության լուծման ուղիները և այլն: ՀՀ պետական կառավարման համակարգի առջև ծառայած կարևորագույն խնդիրների վերաբերյալ ուսանողների կողմից քննարկումը նպաստեց նրանց ինչպես իրավական գիտելիքների, այնպես էլ պրակտիկ գործողությունների պատկերացումների և առանձնահատկությունների զարգացմանը:

Ամբիոնի աշխատանքում տեղ գտած թերությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ու բարելավման ուղիները:

Նպատակահարմար է համակարգված տեսքով առանձնացնել հետևյալ թերություններն ու դրանց բարելավման ուղիները՝

- դեռևս ամբողջովին լուծված չէ համալիր դասավանդման բնականոն ընթացքի երաշխավորման համար անհրաժեշտ նյութերի պատրաստման խնդիրը, մասնավորապես, բացակայում են կոնկրետ առարկաների առնչությամբ օրինակելի գործնական խնդիրների ժողովածուները, կոնկրետ գործնական պարապմունքների համար անհրաժեշտ ուսումնական ձեռնարկները և այլն:

Սրանք հիմնական թերություններն են. այլ թերություններն ու բացթողումները կրում են աշխատանքային բնույթ, որոնք սահմանված կարգով քննարկվում և իրենց լուծումն են ստանում ամբիոնի նիստերում՝ աշխատանքային կարգով:

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1

Դասագիրք

0

Ուսումնական ձեռնարկ

0

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Հողված

1. Գ.Բ. Դանիելյան, «Վարչարարության առանձնահատկությունները ազգային անվտանգության ոլորտում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2(2)2018, Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2019թ., էջեր 111-129:
2. Gevorg Danielyan, evolution of terminology in the context of Armenian jurisprudence, , Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, էջեր 72-87:
3. Գ.Բ. Դանիելյան, Վլադիկ Ներսեսյանցի իրավափիլիսոփայական ժառանգությունը և իրավունքի զարգացման արդի հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտությունե, Երևան, 2018 № 3 (27), էջեր 23-40:
4. Գ.Բ. Դանիելյան, Վարչարարության առանձնահատկությունները ազգային անվտանգության ոլորտում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2018, էջեր 58-77:
5. Գ.Բ. Դանիելյան, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց-ձեռնարկ), Գ. Դանիելյան, Ա. Գյուլումյան, Հ. Նազարյան և Հ. Ենգոյան, ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, Երևան, 2018, հատոր 2, էջ 532:
6. Г.Б. Даниелян, Эволюция административного законодательства в Республике Армения (с. 337-356) / Модернизация административного законодательства (цели, задачи, принципы и актуальные направления): монография / А.М. Абакирова, М.А. Абдыраев, Г.А. Васильевич и др.; отв. ред. А.Ф. Ноздрачев. – М.: Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве Российской Федерации: ИНФРА-М, 2018. – 496 с.
7. Գ.Բ. Դանիելյան, Վարչարարության առանձնահատկությունները ազգային անվտանգության ոլորտում, «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածուե, 1(1)2018, Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան - 2018., էջ 58-77:
8. Գ.Բ. Դանիելյան, Սփյուռքի հայ համայնքների իրավական կարգավիճակը (ԵՄ երկրներ, ԱՄՆ, ԱՊՀ երկրներ), «ԼՂՀ դատական իշխանություն. իրավական տեղեկատվական-վերլուծական հանդես, Իրավական տեղեկատվական-վերլուծական հանդես, 2018, № 2(27), էջ 1-22:
9. Գ.Բ. Դանիելյան, Վլադիկ Ներսեսյանցի իրավափիլիսոփայական ժառանգությունը և իրավունքի զարգացման արդի հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանիե, Իրավագիտություն, Հասարակական գիտություններ, № 3(27), Երևան – 2018, էջ 23-40:
10. Հ.Ա.Ենգոյան «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը որպես ընկերությանը պետական գնումներին մասնակցելու իրավունքից զրկելու հիմք». ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 2 (2), 2018, ԵՊՀ, գլխ. խմբ. Գ.Ս.Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2019թ., էջեր 141-149:

11. Հասմիկ Ենգոյան, Բաֆֆի Նալչաջյան «Գնումների հետ կապված բողոքը քննող անձի կողմից իրականացվող ֆինանսական վերահսկողության որոշ հիմնախնդիրներ պետական գնումների ոլորտում», Պետություն և իրավունք. Գիտական հանդես - Երևան, 2019, N 1 (83), էջեր 75-81:
12. Կ.Վ. Հակոբյան, «Պատշաճ վարչարարության իրավունքի արժեքը» «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 2(2)2018, Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2019թ., էջեր 129-140:
13. Վ.Ն.Այվազյան, «Սահմանադրականության համակարգային հակամարտությունը նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում», «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 2(2)2018, Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2019թ., էջեր 65-78:
14. Վ.Ն.Այվազյան, Սահմանադրականության համակարգային հակամարտությունները և դրանց լուծման հնարավոր ուղիները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 3 (27), էջեր 41-47:
15. Վ.Ն.Այվազյան, Տնտեսական համակարգի սահմանադրաիրավական կարգավորումը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(1)2018, Գլխ. խմբ. Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2018թ., էջեր 78-94:
16. Վ.Ն.Այվազյան, Վ.Գ. Ենգիբարյան, Ն.Տ. Տեր Թադևոսյան, Ընտրական իրավունքի սահմանադրաիրավական հիմքերի և ընտրական իրավունքի խախտումների քննության մեթոդիկայի արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Գիտամեթոդական ձեռնարկ/, Երևան, «Հայրապետ հրատարակչություն», 2018, 208 էջ:
17. Vardan Ayvazyan, *Sistematization of constituyionalty*, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, էջեր 57-71:
18. Rustam Makhmudyan, *Key questions /issues/ of realization of constitutional justice in the Republic of Armenia*, Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, էջեր 95-109:
19. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման առանձին հիմնախնդիրներ՝ սահմանադրական կայունության երաշխավորման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019 № 1 (28), էջեր 3-15:

20. Ա.Ա. Մանասյան, «Սահմանադրական կայունությունն ու սահմանադրական փոփոխությունների հաճախականությունը արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում», «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 2(2)2018, Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2019թ., էջեր 79-92:
21. Anahit Manasyan, The Issue of the Development of the Preamble to the Armenian Constitution: from Theory to Practice, | Revista Institutului National al Justitiei, 1(48) 2019, Chisinau, 2019, էջեր 46-51:
22. Anahit Manasyan, The Issues of Differentiation of Constitutional Policy from Ongoing Politics, Studia Politologiczne (Political Science Studies), N 52, published by the Institute of Political Science of Warsaw University, Warsaw, 2019, էջեր 218-226:
23. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը՝ որպես սահմանադրական կայունության կարևորագույն երաշխիք, Պետություն և իրավունք, N 1 (83), Երևան, 2019, էջեր 5-10:
24. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման առանձին հիմնախնդիրներ՝ սահմանադրական կայունության երաշխավորման համատեքստում , «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2019 № 1 (28), էջեր 3-15:
25. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական, Մենագրություն, «Հայրապետ» հրատ., Երևան, 2019, 344 էջ:
26. Anahit Manasyan, _Constitutional Developments Regarding the Institute of Constitutional Justice in the Republic of Armenia , Materials of the Conference Devoted to the 85th Anniversary of the Faculty of Law at Yerevan State University, Yerevan, YSU Press, 2018, էջեր 88-94:
27. Ա.Ա. Մանասյան, Սահմանադրության անմիջական գործողությունը արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում , «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 3 (27), էջեր 48-54:
28. Ա.Ա. Մանասյան, _Սահմանադրական վեճերի հաղթահարման իրավական կառուցակարգերը արդի սահմանադրական իրավամտածողության համատեքստում, Պետություն և իրավունք, N 3-4 (81-82), Երևան, 2018, էջեր 87-98:
29. Anahit Manasyan, _The Idea of Constitutional Identity in the Modern Constitutional Thought Pravo. Zhurnal Vysshey shkoly ekonomiki, no 3, 2018, Moscow, pp. 81–98:
30. Ա.Ա. Մանասյան, Էլիտիզմի գաղափարը և դրա դերը ժողովրդաիշխանության արդյունավետ իրացման գործում, Արդարադատություն, N 4 (45), 2018. Երևան, էջեր 6-13:

31. Anahit Manasyan, *On the Role of Politics and the Time Factor in Estimating Constitutional Stability*, Revista Institutului National al Justitiei, 2(45) 2018, Chisinau, pp. 53-55:
32. А.А. Манасян, *Идея народовластия в рамках современной конституционно-правовой мысли*, Конституционное и муниципальное право, N 7, 2018, Москва, С. 8-12.
33. Ա.Ա. Մանասյան, *Սահմանադրական դատարանի քաղաքական չեզոքության երաշխավորումը սահմանադրական վեճերի քննության ընթացքում*, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2018 № 2 (26), էջեր 11-25:
34. Ա.Ա. Մանասյան, *Կայուն ժողովրդավարությունը արդի սահմանադրաիրավական մտածողության համատեքստում*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2018, էջ 95-110:
35. Ս. Վ. Մուրադյան, *«Հարկային իրավախախտումների համար պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման վարույթը»*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 2(2)2018, Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2019թ., էջեր 93-109:
36. Ս. Ս. Բադալյան, *«Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի սահմանադրաիրավական ամրագրումը և կատարելագործման ուղիները»*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու», 2(2)2018, Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատարակչություն, Երևան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, 2019թ., էջեր 150-161:
37. Տաթևիկ Նահապետյան, *«Դիմումը որպես վարչական վարույթի հարուցման հիմք»*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան 2(2), 2019, էջեր 52-62:
38. Սոսի Ալեքսանյան, *«Մարդու իրավունքների պաշտպանությունն Արցախի Հանրապետության նախագահի կողմից»*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան 2(2), 2019, էջեր 88-100:

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ՝*

Վ. Այվազյան